ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 51§21 «21» 03 2014թ.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պետության կողմից տրամադրվող սոցիալական փաթեթի շրջանակում ուսման վարձավճարը վճարելու գործընթացը կանոնակարգելու նպատակով.

հրամայում եմ.

1. Սահմանել, որ պետության կողմից տրամադրվող սոցիալական փաթեթի միջոցով ուսման վարձավճարը (կամ դրա մի մասը) վճարող ուսանողները, ուսումնական կիսամյակը փաստացի սկսելուց հետո, պայմանագրով ուսման վարձավճարը վճարելու համար սահմանված ժամկետում պարտավոր են ԵՊՀ հաշվապահություն ներկայացնել դիմում՝ կցելով սոցիալական փաթեթով վճարման կատարումը հիմնավորող փաստաթղթերը (տեղեկանք բանկից և այլն):

2. Սոցիալական փաթեթի շրջանակում, յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի համար սահմանված ուսման վարձավճարը (կամ դրա մի մասը) ենթակա է վճարման մինչև ընթացիկ կիսամյակի քննաշրջանի մեկնարկը:

3. ԵՊՀ հաշվապահությանը հանձնարարել՝ ուսման վարձավճարները սոցիալական փաթեթի միջոցով վճարելու վերաբերյալ դիմում ներկայացրած ուսանողների անվանացանկը, սահմանված կարգով տրամադրել ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությանը և համապատասխան ֆակուլտետներին:

4. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ուսանողներին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ